№ 36 Մարտի 6 (18) **1880** Մարտի 6 (18) № 36

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

—

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

—

Օտարաքաղաքացիք գրեում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

—

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

—

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն. Մի նկատողութիւն. «Голосъ» լրագիրը Կովկասի մասին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Կ. Պոլսի ընկերութիւնները. Նամակ Թիֆլիսից.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Խենթը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

—

Ձեր ազնիւ և նուիրական սկզբունքին հաւատարիմ մնալով, թէ կրօնական տարբերութիւնքը պատճառ պիտի չը լինեն ազգի մէջ խաղաղութիւնը վրդովելու, «Մշակի» մէջ հարցրել էիք արդար զարմանքով, թէ շամախեցի պ. Գ. Լ-ից իր համաքաղաքացիներին նուիրած ալիւրը բաժանելիս լուսաւորչականները ինչո՞ւ են զրկել լիւթերականներին։ Ըստացել պատասխանին և ահա «Մշակը» իր 25 համարում տպում է նորան։ Ի հարկէ այսպիսի մի հարց չը քըքրելը աւելի լաւ կը լինէր, բայց կարծելով որ բոլոր յանցանքը լիւթերականների վրա բեռնելը ճշմարտութեան համաձայն չէ, համարձակվում եմ իբրև բանին հմուտ մի լիւթերական հայ յարգելի շամախեցուն մի քանի դիտողութիւններ անել։

Պարոնը ասում է թէ «լիւթերականների առաջնորդ Ս. Հ. անդադար յորդորում է իւրայիններին չը գնալ լուսաւորչականների հարսանիքները, սգատնակից չը լինել նորանց խնջոյքներին և այլն։» Այս խօսքը ճշմարիտ է. բայց Ս. Հ. դա անում է իբրև իր կրօնական և բարոյական համոզում, վասն զի լաւ գիտէ թէ այն խնջոյքների մէջ «զուռնան», «ծուլլինը», «թամադաները և կենացները» ինչ սասակալի ազդեցութիւն ունեն մարդուս վրա։ Եւ չ՞է որ հէնց նոյն մեր շամախեցի լուսաւորչական եղբարք, այդ խնջոյքների մանաւանդ նիւթական կողմնէ վնասակարութիւնը տեսնելով, մի քանի տարի սորանից առաջ որոշեցին պարզութիւն և խոհեմութիւն մըտցնել թէ իրանց հարսանիքների և թէ խնջոյքների մէջ։

Թէ Ս. Հ. և շամախեցի լիւթերականների մեծ մասը համակրում են ոչ թէ լուսաւորչականին իբրև լուսաւորչական, այլ խորշում են նորա մի քանի վնասակար սովորութիւններից, դա յայտնի է նորանից, որ լիւթերականները միշտ յաճախում են ննջեցեալ պատահած ընտանիքները, ուր որ իրանց սիրով ընդունվելը նախապէս գիտեն։ Եւ երբէք Ս. Հ. միշտ գտնվում է այդ այցելութեանց մէջ։ Իսկ թէ «Ս. Հ. ձգտում է երկսեռների հագուստին անգամ մի ուրիշ ձև տալ», դա ևս ճշմարիտ է, բայց ոչ թէ նորա համար է որ «լիւթերականները զանազանվէին լուսաւորչականներից», որ շատ ծիծաղելի ձգտում կը լինէր, այլ նորա համար որ Շամախու մանաւանդ իգական սեռը՝ թողնէր այն մեզ ամենևին ծանօթ կանանց բազմածախս տաճկական հանդերձների ձևը, և սկսէր՝ քանի որ մենք մի լաւագոյնը հնարել չը գիտենք՝ ընդունել մի եւրոպական և կամ նորա նման ձև։ Ս. Հ. քաջ գիտէ մի կողմնէ մահմետական թուրք զգեստի կանանց վերա ունեցած ըթացուցիչ ազդեցութիւնը, և միւս կողմնէ եւրոպական տարազի քաղաքակրթութեան պահանջներին համապատասխանող լինելը։

Յարգելի նամակագիրը յանդիմանում է լիւթերականներին, որ իրանցից մէկին նախատել էին լուսաւորչականների առաջնորդ եպիսկոպոսի հետ միասին ճաշելու համար։ Իմ կարծիքով այստեղ յանդիմանելու մի բան չը կայ, որովհետև ես քանի՛ քանի՛ ազնիւ և բարեկրօն լուսաւորչականներ գիտեմ, որ վարդապետի կամ եպիսկոպոսի հետ մտերիմ յարաբերութիւններ ունենալ չեն սիրում։ Պէտք չէ անհեռատես ձևանալ։

Իսկ թէ Շամախում մի հարկ կամ տուրք հաւաքելիս լիւթերականները իրանց բաժինը զրկում և առանձին են հաւաքում և վճարում, դա էլ ճշմարիտ է, և պատճառը երկու է՝ մէկը որ իրանց մէջ աղքատի նըկատմամբ ողորմածութիւն և արդարութիւն է լինում, և երկրորդ որ իրանք այդպէս թեթև են պրծնում. լիւթերականները լաւ գիտեն, որ իրանց լուսաւորչական եղբայրների հետ միասին հարկը տալիս իրանց բաժինը միշտ փափուկ տեղերից էին կարում։

Լիւթերականների դպրոցին և քաղաքի բուլվարին կից հողը լուսաւորչականների կողմնէ իբրև օրիորդաց դպրոցի կառուցման տեղ խնդրելու անմխիթար դէպքը թողում եմ պարոն նամակագրի խղճին, թէ արդեօք դա մի լաւ միտք էր, որ ուզում էին լիւթերականների ժողովարանի և դպրոցների ոչ թէ միայն տեսարանը, այլ նաև ճանապարհը խափանել, մինչև քաղաքը՝ մանաւանդ թշուառ աւերակների պատճառով՝ առատ է դատարկ տեղերով։

Ուրեմն ասել թէ «գործերի այս ցաւալի դրութիւնը առիթ է տուել պ. Գ. Լ-ին լիւթերականներին բաժանել լուսաւորչականներից» շատ ստոյգ չէ երևում։

Այսօր մենք աւետարանական հայքս փոքրաթիւ ենք, և ինչ ինչ պատճառներով մեր լեզուն՝ և ոչ թէ մեր փաստը՝ կարճ է, կամ կարելի է ասել, բոլորովին կապված է. ուրեմն մենք մեծամասնութիւնից ներողամտութիւն (tolerance) ենք սպասում։

Մի աւետարանական Հայ

«ГОЛОСЪ» ԼՐԱԳԻՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՍԻՆ

—

Փետրվարի 20-ի ատրճանակաձգութիւնը, գրում է «Голосъ» լրագիրը իր № 54-ի առաջնորդող յօդուածի մէջ, արձագանք գըտաւ Ռուսաստանի բոլոր ծայրերում։ Քաղաք-

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Թ.

Արզրումից դէպի Բայազէտ տանող ճանապարհի մի կողմում, որ միակ քարվանի ճանապարհն է Տրապիզոնից Պարսկաստան, մի ձորի մէջ զետեղված էին քրդերի մի առանձին ցեղի չադրները։ Չադրների բազմութիւնից, որ ծածկել էին մի գեղեցիկ, կանաչազարդ դաշտի մեծ մասը, կարելի էր նախագուշակել ցեղի քանակութեան մեծ թիւը։ Ձիաների երամակներ, ոչխարների հօտեր, կովերի նախիրներ, սփռված չրջակայ լեռների վրա, ցոյց էին տալիս, որ այդ հովիւ ժողովուրդը վայելում էր հարստութեան հետ և բարօրութիւն։

Վերադառնալով ծերունի խաչօի տնից, բոլորովին մութն էր, երբ Ֆաթթահ-բէկը իր խումբով հասաւ յիշեալ չադրներին, որոնց մէջ բնակվող ցեղի պետը և գլխաւորն էր ինքը։ Մի քանի վըրանների առջև դեռ վառվում էին գիշերային խարոյկները կաթ տաքացնելու և կերակուր պատրաստելու համար, և սփռում էին իրանց չուրջը գեղեցիկ լուսաւորութիւն։ Երբ բէկի խումբը մօտեցաւ, շները բարձրացրին մի խառնաձայն աղաղակ, և ամեն կողմից լսելի եղան գիշերապահ հովիւների խորհրդաւոր ձայները, որով իմացում էին տալիս միմեանց, թէ ձիաւորներ են մօտենում։ Բէկի խումբի միջից պատասխանեցին նոյն տեսակ ձայներով. հովիւները հասկացան միմեանց, և այժմ առանց տեսնելու գիտէին, թէ եկողները ովքեր են։ Բէկը իր ձին քշեց ուղիղ դէպի այն վըրանը, որ պատրաստված էր վալիից ընծայ բերող հիւրի համար։ Դա մի թուրք աստիճանաւոր էր, հասակն առած, փորձված և մխված ամեն տեսակ խարդախութիւնների մէջ։ Նա մի ժամանակ վանի կողմերում մուդիրի պաշտօն է վարել և փոխված է եղել չափազանց կաշառակերութեան համար։

—Դուք ինձ բաւական սպասել տուեցիք, բէկ, ասաց մուդիրը տեղից վեր կենալով, երբ բէկը մտաւ նորա վրանի մէջ,—ես միտք ունէի այս երեկոյ մնաք բարով ասել ձեզ։

—Շէյխի գլուխը վկայ, որ դուք շատ անհամբեր մարդ էք, պատասխանեց բէկը ծիծաղելով.—ես զարմանում եմ, թէ դուք ինչպէս էք ինն ամիս համբերել ձեր մօր արգանդում։ Մենք դեռ բոլորովին չենք կշտացել մէկ մէկուց։ Ինչու էք շտապում. չը լինի թէ իմ վրանը ձանձրացրեց ձեզ։

—Ամենևին ոչ. ինձ շատ քաղցր է ձեր հիւրասիրութիւնը. եթէ ինձ մի օր դրախտը կը տանէին (որի վրա մեծ յոյս չունեմ) ես կը ցանկանայի, որ այդ ձեր վրանը լինէր։ Այսուամենայնիւ, ես կը խնդրէի, որ առաւօտեան ինձ ճանապարհ դնէիք։

—Լաւ, լաւ, օսմանլիի խասիաթը ես իմանում եմ. սովորել են հոտած քաղաքներում, փափուկ բարձերի վրա առաւօտից մինչև իրիկուն ձգվել, նարգիլէ ծխել և ղահվէ խմել։ Բայց այդ անապատի մէջ ինչ կայ։ Իրաւն ասեմ, ես ինքս եմ մեղաւոր. ես չը կարողացայ ձեզ զբաղեցնել, որպէս հարկն էր։ Ի՞նչ անեմ, որսորդութիւն չէք սիրում, ձիով ման գալ չէք սիրում, իսկ մեր սարերում ուրիշ զուարճութիւններ չը կան։

Մուդիրը կրկին գործ դնելով իր թուրքական կոմպլիմենտները, պատասխանեց.

—Ձեր դէմքի լոյսը ինձ համար ամեն զուարճութիւններից բարձր է. ես ինձ միշտ երջանիկ կը համարեմ, որ արժանացայ ձեր տեսութեանը։ Բայց մտածեցէք, բէկ, որ ձեր ծառան անկախ մարդ չէ, նորա ժամանակը իրան չէ պատկանում. վալին ժամանակ նշանակեց, որ տասն օրից աւել չուշանամ։

—Ես կը գրեմ վալիին. որ ինքս ուշացրի ձեզ. դուք խօ իմանում էք, թէ նա որքան պատւում է իմ խօսքը։

—Այդ ես իմանում եմ, վալին ձեզ իր երկու աչքերի հետ չի փոխի. ձեր խօսքը նորա մօտ մարգարիտի գին ունի։ Նա ամենի մօտ ասում է, թէ սուլթանը Ֆաթթահ-բէկի նման քաջ և հաւատարիմ ցեղապետ չունի, և այդ պատճառով առաջարկել է ձեզ համար մաջիդիէի առաջին կարգի նշանը։

Բէկը արհամարհական ժպիտ գործեց իր այրական դէմքի վրա և պատասխանեց.

—Ես այդ նշանչան ասած բաները չեմ սիրում, կնիկների զարդարանք են, և աւելի ոչինչ։

—Ապա ինչ էք սիրում։

—Ես սիրում եմ ոսկի մաջիդիաներ. *)

—Այդ էլ կը լինի, բէկ, վալին մեծ շնորհ ունի ձեզ վրա։ Տեսնէք, նա նշանակել տուեց ձեզ համար ռոճիկ, որ այժմ ստանում էք արքունի գանձից, որպէս սահմանապահ և այս կողմերում խաղաղութիւն պահպանող։ Նա ընդունեց ձեր խնդիրքը, որով ցանկանում էիք, որ այս կողմերում ոչ մի մուդիր և գայմագամ չը լինի, այլ բոլոր վարչութիւնները յանձնվեն ձեր կառավարութեանը։ Վերջապէս ինչ որ պահանջել էք, կատարել է նա, և մի անգամ ևս ձեր խօսքը գետին չէ ձգել։

—Ես շնորհակալ եմ վալիից։

Այդ խօսակցութեան միջոցին բէկի ծառաները վրանի չուրջը պատած, և գետնի վրա նստոտած, զուարճանում էին բոլորովին այլ տեսակ խօսակցութիւններով։ Իւրաքանչիւրը պատմում էր իր կատարած քաջագործութիւնները, թէ քանի մարդ է սպանել, որքան աւազակութիւններ է արել և որքան կնիկներ է փախցրել և այլն։

—Օսմանը իր գլխի մազերի համրանքով ոչխար է գողացել, ասում էր Օմարը։

—Իսկ դու, Օմար, շատ բարի պտուղ չես, պատասխանում էր նրան Օսմանը,—ես որքան ոչխարներ եմ գողացել, դու այնքան հայի աղջիկներ ես փախցրել։

—Շարանը հայի աղջիկներ չէ սիրում, ասում է շուտով լաց են լինում, մէջ մտաւ մի ուրիշը։

—Այդ սուտ չէ, խօսեց Շարանը.—այդ քածերի սիրտը կարծես շուշայից է շինած, հէնց որ դիպչում ես, իսկոյն կոտրվում է։ Բայց մերոնք, Աստուած է վկայ, քարէ սիրտ ունեն. գայլի, գազանի ճանկը ցցիր, էլի չեն լաց լինի։ Ես համբերել չեմ կարող, երբ կնիկները լաց են լինում. կարծես, արտասուքը նրանց է տուած։

(Ի՞նչ բարբարոսական զգացմունք, հայ կնոջ արտասուքը բարկացնում է քրդին)։

—Մի ուրիշ բան էլ կայ, նրանց խօսքը կտրեց մի քուրդ, որ հասակով բոլորից ծեր էր.—այդ անհաւատները երբէք ձեռը չեն վեր առնում իրանց անիծած կրօնից։ Ես, դուք գիտէք, որ երեք հատ պահում եմ, ուղիղն ասեմ, խիստ քիչ անգամ ծեծում եմ նրանց, բայց էլի տեսնում եմ, որ թագուն ինչ որ աղօթքներ են անում։ Բայց մի բան լաւ է, որ նրանք եզան չափ գործ են կատարում, մերոնց նման շատ չեն քնում։

—Բայց ինչ սիրուն հարսներ ունի տանուտէր խաչօն, խօսեց մի երիտասարդ քուրդ առանձին ոգևորութեամբ.—եթէ այդ հայը մեր բէկի քիրվան չը լինէր, ես նրա հարսներից մէկին կը գողանայի։

Ծառաների խօսակցութիւնը ընդհատվեցաւ շների աղաղակով. հեռուից կրկին լսելի եղաւ գիշերապահ հովիւների խորհրդաւոր ձայնը։ Ծառաներից մի քանիսը, զէնքերը առած, վազեցին դէպի այն կողմը, որտեղ բարձրացաւ աղմուկը։ Մօտենալով, խաւարի միջից նրանք լսեցին հառաչանքներ—«ի սէր Աստուծոյ, մեզ տարէք բէկի մօտ, մենք աղաչանք ունենք»... Շները փոքր էր մնացել, որ գզգզէին այդ ողորմելիներին, եթէ ծառաները շուտով հասած չը լինէին։ Գիշերով անհնարին է մօտենալ քրդերի օրաներին (օթևան, իջևան) առանց վտանգի հանդիպելու, մէկ էլ տեսար, գիշերապահի նիզակը ցցվեցաւ կողքից մէջ։

Անծանօթները մի քանի հոգի էին, նրանց բերեցին այն վրանի մօտ, որի մէջ բէկը նստած էր իր

*) Մաջիդիայ և նշանչանի և դրամի անուն է։

ներից և տեղերից, հիմնարկութիւններից և անձինքներից համակրական յայտնութիւններ են ստացվում դէպի չարագործի ընտրած զոհը: Մանաւանդ սաստիկ լսելի եղաւ այդ ատրճանակաձգութիւնը Կովկասի սրտի մէջ: Այնտեղից, որպէս պատասխան Կովկասի որդիներից մէկի դէմ ուղղված եղեռնական փորձի, հզօր խօսք լսվեցաւ, որ այժմ անցնում է Պետերբուրգի բոլոր շրջանների մէջ:

Կովկասեան հերոսների պատրիարքը, ծերունի իշխան Գրիգորի Դմիտրիեվիչ Օրբելիանի, կարդալով Թիֆլիսի մէջ կոմս Լօրիս-Մելիքօվին սպանելու համար արած գործի մասին կարճառօտ հեռագրական լուրը, ուղարկեց Թիֆլիսից կոմսին հետեւեալ հեռագիրը. «Հաստատ գնա դէպի մահ, պաշտպանելով ամբողջ Ռուսաստանի համար սուրբ գործը և Աստուած քեզ կօրհնի»:

Ի՜նչպիսի խօսքեր և ի՜նչպիսի մարդիկ: Կայսր Նիկօլայ Պավլօվիչի սիրելին, անսասանելի պատուի տէր մարդը, պատերազմների մէջ դարբնված ծերունի զինուորը՝ հերոսական ողջոյն է ուղարկում Կովկասի որդուն, առաջարկելով արհամարհել մահը և խոստանալով նրան Աստուծոյ օրհնութիւնը: Մի առողջ և հզօր բան է լսվում այդ ողջոյնից: Նրանից փչում է Կովկասի ոգին: Ex Oriente lux: Երեւի Կովկասից կը գայ մեզ տանջող չարիքներից ազատութիւնը: Այնտեղ մեզանից տարբեր կերպով դարբնված մարդիկ կան. նոքա ուրիշ կերպ են մտածում, ուրիշ կերպ են գործում: Կովկասը միշտ եղել է մեր ամենալաւ զինուորական ուսումնարանը: Կովկասի գործիչները սրբութեամբ են պահպանում այդ բարձր ուսումնարանի աւանդները և նրանց բացատրում են մեզ կարճ, բայց մտքի կողմից հարուստ ճառերով: Իշխան Օրբելիանի լաւ հասկանալով կոմս Լօրիս-Մելիքօվի վրա դրած բեռի ծանրութիւնը, շտապում է նրան օգնել իր սուր խօսքով. «Հաստատ գնա դէպի մահ:»

Ռուսաստանը շատ բան տուեց Կովկասին: Կարծես հասաւ հատուցման ժամանակը և Կովկասը ընծայում է մեզ այնպիսի գործիչներ, որոնց մենք կարօտում էինք: Ամբողջ Ռուսաստանի սուրբ գործը պաշտպանելու համար Կովկասի որդին է կոչված և նա հաստատ գնում է դէպի մահ, յուսալով Աստուծոյ օրհնութեան վրա: Կովկասում սնված կոմս Լօրիս-Մելիքօվը, Կովկասի ոգով դարբնված և յենված այնպիսի կովկասցիների վրա, ինչպէս իշխան Օրբելիանի, Աստուծով դուրս կը բերի մեզ այն քարքարոտ ուղիից, որի մէջ խաւվել ենք, և մեզ ազատ ճանապարհի վրա կը կանգնեցնի:

Կրկնում ենք. դա հեշտ գործ չէ: Դժուար խնդիր է: Ուրեմն իշխան Օրբելիանու նման օգնենք նրան, որին Թագաւորի կամքով վիճակվեցաւ այդ խնդիրը: Կովկասեան պատրիարքի հետ ասենք նրան մեր հոգու խորքից. «Հաստատ գնա դէպի մահ, պաշտպանելով ամբողջ Ռուսաստանի համար սուրբ գործը և Աստուած քեզ կօրհնի» և աւելացնենք մեր կողմից. «Աստուած քեզ կը պահպանի Ռուսաստանի համար....»

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Օդէսա, 20 փետրվարի

Օդէսայի օտարական հայերը վաղուց կամենում էին ցցել իրանց լումայն ազգի գանձանակի մէջ «Արարատեան» ընկերութեան համար փող ժողովելով, բայց ինիցիատիվի պակասութիւնից յետաձգեցին մինչև որ «Մշակից» տեղեկացան Թիւրքիայի մանաւանդ Վանի հայերի անտանելի դրութեան մասին սովի պատճառով: Այստեղ ինիցիատիվի սպասելն կատարեալ յանցանք կը լինէր մեր կողմից, որովհետև արդէն անգութ սովը սկսել է տանել իր զոհերը. ուրեմն ամենայն հայի պարտականութիւնն էր ինչքան կարելի է շուտով օգնութեան ձեռք հասցնել անբաղդ զոհերին սովի ճանկերից ազատելու: Ստորագրութիւնը բաց անելով այստեղի մանր վաճառականներից և գործակատարներից բաղկացեալ փոքրաթիւ հայերի մէջ, պէտք է խոստովանենք որ նրանք ուրախութեամբ ընդունեցին առաջարկութիւնը և նուիրեցին իրանց կարողութեան չափ: Ժողովեցաւ 125 րուբլ, որ և ուղարկում ենք «Մշակի» խմբագրութեանը ներփակեալ փոխանակագրով:

Ահա նուիրատուաց անունները՝ Բ. Շէխեանց 10 ր., Ազգասէր ոմն 10 ր., Михаилъ Акоповъ 10 ր., Ղուկաս Մաղաուզեանց 10 ր., Павелъ Кузановъ 10 ր., Տիգրան Տէր-Ստեփանեանց 5 ր., Աղամիրզեանց 12 ր., I. Хитаровъ 15 ր., Նիկիտ Թարայեանց 7 ր., Մ. Միրզայեանց 10 ր., А. Лелуа (грузинъ) 3 ր., Վարդան Խուդավերդեանց 3 ր., Նիկօլայ Գովաթեանց 3 ր., Мгебровъ (грузинъ) 2 ր., Սերգէյ Մարգարեանց 3 ր., Առաքել Ընձանեանց 3 ր., Կիւրեղ Սիմոնով 3 ր., Ա. Մատթէոսեանց 2 ր., Յովհաննէս Մնշարցակեանց 3 ր., Залиновъ 1 ր.: Ընդամենը 125 րուբլ որը խնդրեմ բարեհաճէք հասցնել ուր հարկն է: Յոյս ունենք աւելի եւս ժողովելու:

Բ. Շէխեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հեռագրում են, որ մարտի 2-ին այդտեղ սիրողների հայոց ներկայացումն կար յօգուտ թատրօնական ֆօնդի: Անտրակտներում օրիօրդների մի խումբ երգեց ուղեկցութեամբ ջութակի և ֆիսհարմոնիայի: Օրիորդ Տէր-Մառուքեան շատ լաւ երգեց «Ծիծեռնակ» երգը: Դահլիճը լի էր, չը նայելով որ եղանակը շատ վատ էր:

—

Ստացանք ՑԱՐԻՑԻՆԻՑ «Արարատեան» ընկերութեան տարեկան անդամներից 100 րուբլ: Անդամները սրանք են, որոնցից իւրաքանչիւրը 20 րուբլ է վճարել: Յովհաննէս Հախումեանց, Զաքարիա Կրասիլնիկեանց, Աղասի Զախմախսազեանց, Յակովբ Ղազեանց և Գրիգոր Ալաջալեանց:

—

Ստացանք հետեւեալ նամակը ԹԻՖԼԻՍՈՒՄ բընակվող դերձակ Գրիգոր Անեանից: Մեր գրված նամակի համաձայն որ տպված էր «Մշակի» 23-որդ համարում ուղարկում ենք ձեզ, պ. խմբագիր, ամսվայ մեր արդիւնքի 5% յօգուտ Վանի սովատանջների: Այդ գումարը կազմում է 10 ր. 50 կոպ., խնդրելով հասցնել ուր հարկն է, յատուկ շնորհակալութիւն ենք յայտնում օրիորդ Ն. Տէր-Մարկոսեանցին, որը կարդալով մեր վերոյիշեալ նամակը յորդորել է մի քանի իր ծանօթ օրիորդներից իրանց հագուստները մեզ պատուիրելու: Նոյնպէս շնորհակալութիւն ենք յայտնում մեր բոլոր պատուիրողներին: Դերձակ Գրիգոր Անեան և դերձակուհի Շուշանիկ (Սանդուխտ) Անեան:»

—

Մենք թէև շտապում ենք ուղարկել յօգուտ Վանի սովեալների ստացվող նուիրատուութիւնները, բայց նիւթերի շատութեան պատճառով մեր խմբագրութեան մէջ, նուիրատուների ցուցակները աւելի ուշ են տպագրվում «Մշակի» մէջ, քան թէ նրանց նուիրած փողերը Կ. Պօլիս են ուղարկվում:

—

Ստացանք ՑԱՐԻՑԻՆԻՑ յօգուտ Վանի սովատանջների 175 րուբլ: Նուիրատուների ցուցակը կաշխատենք շուտով տպագրել: Բացի սորանից ստացանք նոյն քաղաքի հետեւեալ անձինքներից 14 րուբլ նոյնպէս յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների: А. П. Ивановъ 10 ր., Я. З. Райкинъ (Հրէայ) 2 ր., Извощиковъ 1 ր. և առաջին ցուցակի փոստի ծախսից աւելացածը 1 ր.: Ընդամենը 14 ր.:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ Մեծ իշխան կովկասեան փոխարքան առաջարկել է պետական խորհրդին թոյլ տալ Անդրկովկասում ընտրել պատուաւոր հաշտարար դատաւորներին: Յայտնի է որ այդ ընտրողական իրաւունքը վաղուց է արդէն վայելում են Ռուսաստանի ներքին գաւառները:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ բարձր յանձնաժողովի կառավարիչ, կոմս Լօրիս-Մելիքօվ հրաւիրել է Ս. Պետերբուրգի քաղաքագլխին անդամ լինել պետական բարձր յանձնաժողովի և դիմել է մի և նոյն ժամանակ մայրաքաղաքի Դումային խնդրելով որ Դուման քաղաքային պատգամաւորներից երեք չորս մարդուն ընտրի և առաջարկի իրան, որպէս զի այդ ընտրվածներն էլ անդամ լինեն բարձր յանձնաժողովի: Դումայից բացի քաղաքագլուխ, բարօն Կօրֆից, ընտրվեցան հետեւեալ անձինքները՝ Գլազունով, Կավօս, Լիխաչեվ, Մատվէեվ, Միտկով, բարօն Ֆրէդէրիկս, Նաբօկօվ և Միասնեզօվ:

—

Միջազգային հեռագրական ընկերութիւնը այնքան խառն և անորոշ կերպով հաղորդեց բոլոր տեղական լրագիրներին մարտի 1-ին Ս. Պետերբուրգում ներքին փոխառութեան կատարված տիրաժի թւանշանները, որ մենք պարտաւորութիւն ենք համարում յայտնել մեր ընթերցողներին, որ բոլորովին պատասխանատու չենք մեր երէկվայ համարում տպված տարած գումարների թւանշանների համար:

—

Ստացանք ռուս բնագէտների և բժիշկների Ս. Պետերբուրգի VI ժողովից մի բրօշիւր հետեւեալ

հիւրի հետ: վրանի առջև կախած լապտերների լուսով երևաց, որ նրանք վաճառականներ էին և բեռ տանող չարվադարներ, որոնց մէկի արիւնաշաղախ գլուխը, միւսի թիկը, երրորդի մարմնի մի այլ մասը, փաթթած էին, և արիւնը դեռ հոսում էր վէրքերից:

Բէկը լսելով դրսի աղմուկը, կանչեց ծառաներից մէկին և հարցրեց.

—Ի՞նչ է պատահել:

—Մի քանի վաճառականներ ձեզ մօտ խնդիր ունեն, ասում են, թէ կողոպտեցին մեր քարվանը:

Տհաճութեան նման մի բան անցաւ բէկի ուրախ դէմքի վրա, բայց նա ծածկելով իր ներքին վրդովմունքը, հրամայեց կանչել կողոպտվածներին:

—Զարմանալի բան է, դարձաւ նա դէպի մուղիրը,—«իմ հողի» վրա երբէք այսպիսի անկարգութիւններ չեն պատահել, հիմայ ինչպէս է եղել, որ կողոպտել են դրանց քարվանը:

Բէկը, սովորութիւն ունէր իր ցեղի բնակած երկրին իր հողը կոչել, թէև այնտեղ մի ափ հող անգամ որ և իցէ քրդի չէր պատկանում, այլ բոլորը անհաստատաբնակ բոշաների նման թափառում էին մի տեղից միւս տեղ:

—Աւազակութիւններ ամեն տեղ պատահում են, պատասխանեց մուղիրը հանդարտութեամբ,—երկիրը առանց աւազակի չէ լինում: Երկնքի մէջ էլ յայտնվեցան սատանաներ: Արզրումի մէջ օր չէր անցնում, որ վալիի մօտ գանգատաւորներ չը գային:

Բէկը, խրախուսվելով մուղիրի շողոքորթութիւններից, ասաց.

—Հաւատացէք, մուղիր, շէյխի գլուխը վկայ լինի, որ ես այս կողմերը այնպէս եմ պահում, որ երկնքի թռչունն էլ համարձակ չէ կարողանում «իմ հողի» վրայով անցկենալ: Զարմանում եմ, ո՞ր սատանան պէտք է կողոպտած լինի այդ խեղճերին:

Յայտնվեցան վիրաւորված և արիւնշաղախ վաճառականները: Նրանցից մէկը, որ փոքր ինչ առողջ էր, առաջացաւ և խօսեց.

—Ձեր ոտքերի փոշին համբուրելու ենք եկել, բէկ, վերևում Աստծուն ենք ճանաչում, ներքևում ձեզ. մարգարէի սիրոյ համար, օգնեցէք մեզ. խեղճ վաճառականներ ենք. մեր քարվանը կողոպտեցին, մեր ընկերներից շատերին սպանեցին, մնացածներին ձեր բարի աչքերի առջև տեսնում էք, վիրաւորված են, շատ չեն ապրի: Ամենը, ինչ որ ունէինք, տարան, ոչինչ չը թողեցին:

Վիրաւորվածները, չը կարողանալով իրանց ոտքի վրա պահել, նստեցին վրանի առջև, առողջները կանգնած մնացին:

—Ո՞րտեղ կողոպտեցին ձեզ, հարցրեց բէկը:

—Այստեղ, այստեղից ոչ այնքան հեռու լեռների մէջ կողոպտեցին մեզ. մեր քարվանը դուրս բերեցին ճանապարհից, քշեցին մի խուլ ձորի մէջ, այնտեղ մեր բոլորին կապկապեցին և ձգեցին մի փոսի մէջ, յետոյ սկսեցին հակերը ցրվել, ինչ որ լաւ բան կար, բոլորը տարան:

—Օրվայ ո՞ր ժամն էր:

—Կէսօրին մօտ էր: Մենք մինչև իրիկուն կապված մնացինք այն փոսի մէջ: Աստուծոյ ողորմութիւնը հասաւ, մեզանից մէկը քանդեց իր կապերը և մեր կապերն էլ արձակեց. թէ չէ, պէտք է մնայինք այն փոսի մէջ, և սովից մեռնելով, գազանների կերակուր դառնայինք:

—Դուք ո՞րտեղացի էք, քարվանը ո՞րտեղից էր գալիս և ո՞ւր էր գնում, շարունակեց բէկը իր հարցուփորձը:

—Ձեր ծառաները պարսկաստանցի վաճառականներ ենք. քարվանը բեռներ ընդունեց Տրապիզոնում, որ Պօլսից նաւով էին բերված. անցանք Արզրումից մինչև այստեղ անփորձ, և պէտք է շարունակէինք մեր ճանապարհը, և Բայազէդից Պարսկաստան գնայինք, բայց այստեղ այս դժբախտութիւնը պատահեց մեզ: Մեր քարվանը բեռնաւորած էր ամենաթանգագին ապրանքներով. բայց ոչինչ չը թողեցին, ինչ որ տանելու էին, տարան, մնացածը այրեցին:

—Շէյխի գլուխը վկայ լինի, որ այսպիսի բարբարոսութիւն ես առաջին անգամն եմ տեսնում, դարձաւ բէկը դէպի մուղիրը, որ հետաքրքրութեամբ լսում էր վաճառականների պատմութիւնը:

—Դուք կարողացաք ճանաչել աւազակներին, հարցրեց մուղիրը, ինքն ևս հարցուփորձի մէջ մտնելով:

—Ի՞նչպէս ճանաչէինք, պատասխանեց խօսող վաճառականը.— բոլոր աւազակների երեսները կապած էին, միայն աչքերն էին երևում: Եւ երբ մեզ բռնեցին, մեր աչքերն էլ կապեցին, յետոյ սկսեցին ապրանքները բաց անել: Բայց այսքանը տեսանք, որ քրդեր էին:

—Քանի հոգի կը լինէին, դարձեալ հարցրեց մուղիրը:

Յիսունի չափ:

—Դէպի ո՞ր կողմը գնացին:

—Մենք տեսնել չը կարողացանք, ասացի, որ մեր բոլորի աչքերը կապած էին, և մեզ ձգել էին մի փոսի մէջ, ձեռներից և ոտներից նոյնպէս կապված:

—Բաւական է, մէջ մտաւ բէկը բարկութեամբ ընդմիջելով մուղիրի հարցուփորձը,—ես բոլորը հասկացայ:

Յետոյ նա դարձաւ դէպի վաճառականները.

—Հիմայ գնացէք և հանգստացէք, եթէ աւազակները մեր կողմերի քրդերից լինեն, ես կաշխատեմ անպատճառ գտնել նրանց և ձեր մի չօփը (չիւղը) չի կորչի: Իսկ եթէ ուրիշ կողմերից եկած լինեն, այն ես կարող եմ ցոյց տալ. դուք անհոգ կացէք, ես չեմ ներում որ «իմ հողի» վրա անիրաւութիւններ գործվեն:

Վաճառականները գլուխ տուեցին, և սկսեցին օրհնել բէկի կեանքը:

—Կրպօ, դարձաւ նա իր ծառաներից մէկին,—տար այդ մարդերին քո վրանը և պատվիր, որպէս արժան է պատուել Աստուծոյ հիւրերին. շուտով կանչիր բժշկին, որ դրանց վէրքերը դարմանէ. քեզ եմ յանձնում, եթէ գանգատվելու լինեն, ձեռքիցս չես պրծնի:

Վաճառականները կրկին օրհնեցին բէկի կեանքը, կրկին գլուխ տուեցին և հեռացան:

Նրանց հեռանալուց յետոյ բէկը դարձաւ դէպի իր հիւրը այս խօսքերով.

—Տեսնում էք, պատուելի մուղիր, ահա այսպիսի դէպքեր են պատահում, եկ դու հիմա իմացիր, թէ ո՞ր սատանան է տարել դրանց ապրանքները: Ես հաւատացած եմ, որ աւազակները մեր կողմերի քրդերից չեն լինելու: Ես սաստիկ պատժում եմ աւազակներին. իմ երկիւղից ոչ ոք չի համարձակվի այսպիսի բան անել: Բայց գալիս են զանազան տեղերից, շատ անգամ Պարսկաստանից, և մեր կողմերում աւազակութիւն են անում: Ո՞վ կարող է ճանաչել, երբ պարսիկը քրդի հագուստ է հագնում: Այդ շատ անգամ պատահում է և մեզ գլխացաւանք է պատճառում: Այսուամենայնիւ, ես պէտք է աշխատեմ, գուցէ ինձ կը յաջողվի բռնել տալ աւազակներին:

—Ահմէ, դարձաւ նա իր հօրեղբօր որդուն, որ ամբողջ ժամանակը այնտեղ լուռ նստած էր,— այս րօպէիս կը վեր առնես քեզ հետ քսան ձիաւոր մեր քաջերից, նախ քարվանի կողոպտված տեղը կը գնաս, աւազակների ձիաների հետքերը կը հետազօտես, և շրջակայ հովիւներից հարցուփորձներ կանես, մի խօսքով, ամեն հնարք գործ կը դնես գտնելու չարագործներին. քեզ խրատներ պէտք չեն, դու այդ բաները լաւ ես իմանում: Ես չեմ ների, որ «իմ հողի» վրա մարդիկ կողոպտէին. դա իմ անուանը պակասութիւն է բերում:

Ահմէն գիշերով ճանապարհ ընկաւ կատարելու բէկի հրամանները:

—Ահմէն շատ հոտառութիւն ունի, եթէ աւազակները շատ հեռու գնացած չը լինեն, անպատճառ կը գտնի, խօսեց բէկը:

—Երեւում է...պատասխանեց մուղիրը խորհրդաւոր ձայնով:

Արդէն գիշերից բաւական անցել էր. բէկը հրամայեց ընթրիք տան, կերան, խմեցին, յետոյ բարի գիշեր և հանգստութիւն մաղթելով իր հիւրին, նա խոստացաւ, որ առաւօտեան ճանապարհ կը դնէ մուղիրին, իսկ ինքը գնաց իր վրանը քնելու:

Բայց մուղիրը երկար անքուն մնաց և ինչ որ բանի վրա մտածում էր....

(Կը շարունակվի)